

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Հարցազրույցն անցկացվել է ընթացիկ տարվա հոկտեմբերի 30-ին ինստիտուտի արևմտահայերենի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ, գ. դ., պրոֆ. Ա. Ե. Սարգսյանի հետ:

Հարց. Պրն. Սարգսյան՝ Ձեզ գոհացնո՞ւմ է լեզվի արդի վիճակը:

Պատ. Անկեղծ ասած, ո՛չ: Եթե մի ժամանակ ռուսերենն էր վտանգում մեր լեզվի անաղարտությանը, ապա հիմա՝ անգլերենը. ցուցանակների մեծ մասը, օրինակ, օտարալեզու է և աղավաղումներով: Պետք է լքջորեն մտածել այդ մասին:

Հարց. Իսկ ի՞նչ պետք է անել, պրն. Սարգսյան, կացությունը շտկելու համար:

Պատ. Նախ, պետք է վերականգնել տերմինաբանական խորհրդի գոյությունը: Կարծում եմ, պատժելուց առաջ լեզուն կիրառողներին պետք է բացատրել հայերենի կանոնը: Միահամուռ ջանքեր են պետք և նպատակասլաց գործունեություն:

Հարց. Կարծում եք միանգամից կարո՞ղ ենք հասնել արդյունքի:

Պատ. Ո՛չ, բայց ցանկալի արդյունքի ճանապարհին կլինենք:

Հարց. Արդյո՞ք եթերի լեզուն է հիմնական մեղավորը:

Պատ. Եթերը հայելին է մեր լեզվական «դեմքի». ցույց է տալիս այն, ինչ կա: Եթե աղճատված, աղտոտ է մեր լեզուն, միշտ չէ, որ եթերն է մեղավոր: Մեր գնահատականը կլինի թերի, եթե մեղքը բարդենք եթերին:

Հարց. Պրն. Սարգսյան՝ այսօրվա դասագրքերն է՞լ թերություններ ունեն, ի՞նչ կասեք այդ մասին:

Պատ. Հարցը շատ տարողունակ է, դրան կանդադառնանք ավելի ուշ, հիմա պարզապես պետք է շեշտել, որ դասագիրքն այնքան լավը պետք է լինի, որ այն, ինչպես ասում են, «պահեն բարձի տակ»:

Հարց. Գրական արևելահայերենի և արևմտահայերենի առնչությունների հարցն այսօր ինչպե՞ս եք տեսնում:

Պատ. Փոխազդեցությունների ճանապարհով:

Վերջին հարց. Ի՞նչ եղավ «Մեր լեզուն մեր խոսքը»: 2Է՞ որ այն տարիների ճանապարհ անցած հեռուստատեսային հաղորդաշար էր:

Պատ. Հաղորդաշարի գլխավոր նպատակն է եղել մի կողմից՝ մեր աղքատիկ խոսքը հարստացնել, կանոնարկել, ըստ հնարավորին մոտեցնել գրական լեզվին, մյուս կողմից՝ գրական լեզուն դարձնել ավելի կենդանի, հյութեղ, մոտ առօրյա խոսքին: Երկու տարի անց կլրանա «Մեր լեզուն մեր խոսքը» հաղորդաշարի եթերային կյանքի քառասնամյակը: Նվաճումներ եղել են, անշուշտ. մեր օրերում հաղորդաշարի բացակայությունը եթերից շատերն են ցավով ընդունում:

Անշուշտ, պետք է վերականգնել հաղորդաշարը: Ոչ թե կրկնելով երեք-չորս տասնամյակ առաջ եղած խնդիրները, այլ այսօրվա հրատապ հարցերին անդրադառնալով: Տալ

գիտական լուծումներ, գիտական, բայց մատչելի, մի խոսքով՝ շատ անելիքներ կան, և պետք չէ մոռանալ, որ լեզուն ունի ամենօրյա հոգա-
ծության կարիք, այլապես՝ *վարկա-
րեկվելը* կդառնա *վարքաբեկվել*:

Լեզվի պետական տեսչությունը այդ գործունեությունը չի ծավալում:

Լեզվի պետական տեսչությունը գործադիր մարմին է: Մեր պահանջն է ունենալ օրենսդիր մարմին, որը ժամանակին անում էր տերմինա-
բանական կոմիտեն, հետագայում՝ անկախության առաջին տարիներին, հայերենի բարձրագույն խորհուրդը: Մեր համոզումն է, որ տերմինա-

բանական կոմիտեն կամ հայերենի բարձրագույն խորհուրդը պետք է գործի: Այսօր հայերենի բարձրագույն խորհուրդը Լեզվի պետական տես-
չության կազմում է, իսկ վերջինս՝ ՀՀ կրթության և գիտության նախա-
րարության կազմում: Մեկ խոսքով, հայերենի բարձրագույն խորհրդին պետք է տրվեն լայն իրավասություն-
ներ, միևնույն ժամանակ ներկա-
յացնեն ռեալ պահանջներ: Մենք հավատում ենք, որ նախ պետք է տալ վերահսկելու իրավասություն, այնուհետև կատարել տևական կանո-
նարկման աշխատանքներ:

*Ինստիտուտի կրպսեր գիտաշխատող
Ա. Լ. Քարպաշյան*